ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ծրագրի անվանում	Հումանիտար աջակցություն՝ հակամարտությունից տուժած խոցելի անձանց համար»
Կոնսորցիումի առաջնորդ	«Մարդը կարիքի մեջ» ՀԿ
Իրականացնող գործընկերները	Աշխարհի բժիշկները (*Médecins du Monde* (MdM)), Առաքելություն Հայաստան» (ԱՀ)
Տյողությունը	20 ամիս (07/11/2023թ.-07/06/2025թ.)
Վերջնական գնահատման տյողությունը	Առավելագույնը 5 շաբաթ (համաձայն ստորև ներկայացված ժամանակացույցի)
Կանխատեսվող մեկնարկ	Հուլիս-օգոստոս 2025թ.

1. Ներածություն

1.1 Գործընկեր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություն

1. «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը միջազգային, ոչ-շահութաբեր կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1990-ականների սկզբին Չեխիայում: Այդ ժամանակից ի վեր այն դարձել է հետկոմունիստական Եվրոպայի ամենամեծ մարդասիրական և զարգացման կազմակերպությունն իր տեսակի մեջ և ներկայումս գործունեություն է ծավալում աշխարհի 24 երկրում:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն Հայաստանում ներկայացված է 2003 թվականից՝ ունենալով գրասենյակներ Երևանում և Գորիսում, իսկ ծրագրերն ընդգրկում են երկրի բոլոր մարզերը: Նախկինում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի Հայաստանի ներկայացուցչության ուշադրության կենտրոնում եղել են՝ ապօրինի միգրացիայի խնդիրները, հայրենադարձներին վերադարձի աջակցություն տրամադրելը, երեխաների թրաֆիքինգի կանխարգելումը և աշխատատեղերի ստեղծումը: Կազմակերպությունն աջակցել է փոքր բիզնեսների զարգացմանը և նպաստել է զբոսաշրջության ոլորտի առաջընթացին՝ քայլարշավային արահետների ստեղծման միջոցով: Այն համագործակցել է մասնագիտական կրթության և ուսուցման (VET) հաստատությունների և մասնավոր հատվածի հետ՝ աջակցելու մասնագիտական ուսանողների կրթությունից աշխատանքին անցման գործընթացին:

Ներկայումս կազմակերպությունը սերտորեն համագործակցում է տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) հետ՝ նպատակ ունենալով ուժեղացնել դրանց կարողությունները և զորացնել որպես փոփոխությունների խթանիչներ:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն 2020 թ. հոկտեմբերին, պատերազմի առաջին օրերին, ակտիվացրեց իր արտակարգ արձագանքի մեխանիզմը՝ մոբիլիզացնելով գլխավոր գրասենյակի արագ արձագանքման թիմը և հատկացնելով մասնավոր ֆինանսավորում՝ անհապաղ մարդասիրական միջամտություններ իրականացնելու համար: Այդ պահից ի վեր «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունը իրականացրել է մի շարք մարդասիրական նախագծեր՝ ֆինանսավորվելով հետևյալ դոնորների կողմից՝ DG ECHO, USAID/BHA, ԵՄ պատվիրակություն Հայաստանում, START հիմնադրամ, Չեխիայի Արտաքին գործերի նախարարություն, Stichting Vluchteling, ՄԱԿ ՓԳՀ (UNHCR) և ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ (UNICEF):

Լրացուցիչ տեղեկությունների համար PIN Հայաստանի և նրա ծրագրերի մասին կարող եք այցելել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ֆեյսբուքի էջը և պաշտոնական կայքը:

2018 թվականին **ֆրանսիական «Աշխարհի բժիշկները» (Médecins du Monde (MdM))** կազմակերպությունը մշակեց Հարավային Կովկասի տարածաշրջանային ռազմավարություն՝ ընդլայնելով իր գործունեությունը՝ հիմնական և խոցելի խմբերի նկատմամբ վնասի նվազեցման (harm reduction) վրա ուժեղ շեշտադրմամբ, որը իրականացնում էր Վրաստանում դեռևս 2011 թվականից, ընդլայնելով այն դեպի Հայաստան:

Արցախյան հակամարտության վերաակտիվացումից հետո MdM-ը 2020 թվականի հոկտեմբերին և դեկտեմբերին իրականացրեց երկու հետազոտական առաքելություն՝ նպատակ ունենալով գնահատել տեղահանված անձանց իրավիճակը Հայաստանում, բացահայտել առկա բացերն ու մարտահրավերները, ինչպես նաև առողջապահական կարիքները: Այս հետազոտական առաքելությունների արդյունքներից ելնելով՝ 2021 թվականին կազմակերպությունն իրականացրեց ծրագիր, որն ուղղված էր տեղական գործընկերների կարողությունների զարգացմանը՝ մասնագետների վերապատրաստման միջոցով գենդերային բռնության (GBV) և հոգեսոցիալական աջակցման (MHPSS) ոլորտներում:

2022 թվականին, Վարդենիսում և Սոթքում իրականացված հետազոտական առաքելությունից հետո, MdM-ը որոշում կայացրեց իրականացնել արտակարգ պատրաստվածության ծրագիր՝ հատուկ ուղղված հոգեսոցիալական միջամտություններին Գորիսում՝ շարունակաբար հետևելով իրավիճակի զարգացմանը՝ արձագանքը համապատասխանեցնելու նպատակով:

Միջամտությունների ընթացքում MdM-ը հնարավորություն ունեցավ քննարկումներ վարել տեղական համայնքի հետ և քաղել դասեր 2020 թվականից ի վեր իրականացված տարբեր արտակարգ արձագանքներից՝ ձևավորելով ամուր պատկերացում տարածքի

հոգեսոցիալական կարիքների մասին, ինչպես նաև հաստատելով սերտ համագործակցություն շահառու կողմերի և Հայաստանի պետական իշխանությունների միջև:

2020 թվականի վերջի նախնական արտակարգ արձագանքման փուլից հետո, MdM-ը հիմք դրեց մարդասիրական արտակարգ աջակցությանը՝ նպատակ ունենալով աջակցել այն մարդկանց, ովքեր հասել էին Հայաստան հակամարտության հետևանքով՝ սոցիալական և առողջապահական ծառայությունների հասանելիություն ապահովելու համար:

«**Առաքելություն Հայաստան» (ԱՀ)** հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1988 թվականին՝ Հայաստանի համար լուրջ մարտահրավերներով լի ժամանակաշրջանում: Այժմ գործում է ամբողջ հանրապետության տարածքում՝ ունենալով 26 կենտրոններ և շուրջ 300 աշխատակից (օրինակ՝ ցերեկային խնամքի կենտրոններ, ճաշարաններ, մանկական զարգացման կենտրոններ, սոցիալական տներ, շուրջօրյա խնամքի կենտրոններ):

ԱՀ-ն աջակցություն է ցուցաբերում Հայաստանի ամենախոցելի խմբերին, այդ թվում՝ տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականներին, ապաստան հայցողներին, փախստականի նման կարգավիճակ ունեցող անձանց, տեղահանված բնակչությանը, ինչպես նաև տարբեր կենսական պայմաններում գտնվող երեխաներին:

Կազմակերպությունը ֆինանսավորում է ստանում Հայաստանի Հանրապետությունից, արտասահմանյան կառավարություններից և մի շարք գործընկերներից, այդ թվում՝ ՄԱԿ ՓԳՀ (UNHCR)**,** Եվրոպական Միություն**,** ԱՄՆ դեսպանատուն Հայաստանում**, «**Մարդը կարիքի մեջ» ՀԿ**,** Action Against Hunger**,** ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր (WFP)**,** Save the Children**,** Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և այլք:

ԱՀ-ն ակտիվացրել է իր թիմերը՝ արձագանքելու կարիքներին ինչպես COVID-19 համավարակի**,** այնպես էլ 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում: Ներկայումս ԱՀ-ն արձագանքում է 2023թ. սեպտեմբեր-հոկտեմբերին տեղի ունեցած զանգվածային տեղահանության ճգնաժամին՝ տրամադրելով սնունդ, ոչ պարենային ապրանքներ (NFI-ներ), հոգեսոցիալական և իրավական աջակցություն տեղահանված անձանց:

1.2 Ծրագրի համառոտ նկարագրություն

«Հումանիտար աջակցություն՝ հակամարտությունից տուժած խոցելի անձանց համար» ծրագիրը ֆինանսավորվել է DG ECHO-ի ֆոնդից և իրականացվել է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի առաջնորդած կոնսորցիումի կողմից, որում ընդգրկված էին նաև MdM և Առաքելություն Հայաստան կազմակերպությունները:

Ծրագրի նպատակն էր՝ «Փրկել կյանքեր, նպաստել բարեկեցությանը և ամրապնդել հակամարտությունից տեղահանված և ընդունող համայնքների խոցելի բնակչության դիմակայունությունը՝ ճկուն և բազմաբնույթ մարդասիրական աջակցության միջոցով»**:**

Ծրագրի շրջանակում կոնսորցիումի անդամ կազմակերպություններին հաջողվեց հասնել և աջակցություն ցուցաբերել 40,654 խոցելի շահառուի, ովքեր տուժել էին Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտությունից: Շահառուների մեծ մասը (մոտ 80%) կազմել են տեղահանված անձինք, իսկ մնացած 20%՝ ընդունող համայնքների ներկայացուցիչներ:

Գործողությունները նախատեսված էին իրականացվել ճկուն ձևաչափով Հայաստանի ողջ տարածքում՝ հիմնվելով կարիքների և բացերի վրա, որոնք բացահայտվել են օպերատիվ մակարդակում՝ համագործակցելով պետական կառույցների և այլ մարդասիրական կազմակերպությունների հետ, որպեսզի աջակցությունը լինի հասցեական և ապահովի ծրագրերի փոխլրացումը:

1.3 Ծրագրի ընթացիկ նկարագիր

Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանում ջանքերն ուղղված էին մի շարք հիմնական ոլորտների վրա՝ նպատակ ունենալով բավարարել խոցելի բնակչության կարիքները, հատկապես՝ առողջապահության, պաշտպանության, կացարանի և կանխիկ գումարային աջակցության (գումարային և վաուչերային աջակցություն) ոլորտներում:

Առողջապահության ոլորտում հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցությունը (MHPSS) համարվեցին արձագանքման առանցքային բաղադրիչներից: Ընդհանուր առմամբ տրամադրվել է 9,674 հոգեկան առողջության խորհրդատվություն: Այս խորհրդատվությունները նպատակ ունեին մեղմելու շահառուների հուզական տագնապը և բարելավելու նրանց ֆունկցիոնալությունը, ինչի արդյունքում շահառուների 89%-ը ցուցաբերել է դրական առաջընթաց:

Պաշտպանության ոլորտում տրամադրվել է իրավական աջակցություն ընդհանուր 485 փախստականի, որոնք ուղղորդվել էին սոցիալական աշխատողների կողմից՝ հիմնականում ծրագրի իրականացման առաջին փուլում: Աջակցությունն իրականացվել է իրավական խորհրդատվության, համապատասխան փաստաթղթերի ձեռքբերման աջակցման, պետության կողմից տրամադրվող պաշտպանական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ դիմումների լրացման օժանդակության, ինչպես նաև իրավունքների և տրվող արտոնությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ձևով:

Բացի այդ, պաշտպանության մասին տեղեկատվության տարածմամբ հասվել է ընդհանուր 16,351 անձի, որոնք ստացել են համապատասխան տեղեկատվություն իրենց իրավունքների, ծառայությունների առկայության և դրանց մատչելիության վերաբերյալ: Տեղեկատվության տարածումը իրականացվել է սոցիալական աշխատողների, հոգեկան առողջության օգնականների և բուժաշխատողների կողմից:

Բռնության կանխարգելման և արձագանքման միջոցառումները նույնպես հանդիսացել են առաջնահերթություն: Ընդհանուր 97 փախստականների տրամադրվել է համապատասխան արձագանք՝ ապահովելով նրանց անվտանգությունն ու բարեկեցությունը:

Կացարանի և բնակավայրերի ոլորտում ձմեռացման աջակցությունը եղել է առաջնահերթ ուղղություն: Ընդհանուր 475 ընտանիք (2,713 անձ) ապահովվել է անհրաժեշտ ձմեռացման ոչ պարենային ապրանքներով (NFI-ներ)**:** Բացի այդ, 799 ընտանիք (3,821 անձ) ստացել է աջակցություն իրենց հիմնական կարիքների բավարարման համար՝ հատկապես ջեռուցման նպատակով բրիկետներով ապահովման միջոցով ձմեռային ամիսներին:

Կանխիկ գումարային աջակցության միջոցառումները նպատակ ունեին օժանդակել կարիքավոր անձանց: Մինչ այժմ 1,128 ընտանիք (5,759 անձ) օգտվել է այս աջակցությունից՝ ստանալով կարևոր աջակցություն Հայաստանի տարբեր շրջաններում բնակվող խոցելի խմբերի համար:

Այս գործողությունները ցույց են տալիս խոցելի բնակչության կարիքներին արձագանքելու համապարփակ մոտեցում**,** ապահովելով նրանց հասանելիությունը հիմնական ծառայություններին, պաշտպանությանը և աջակցությանը՝ դժվարին ժամանակաշրջանում:

Ծրագրի արտաքին եզրափակիչ գնահատում

2.1 Գնահատման նպատակն է

Գնահատման նպատակը ծրագրի գործունեության համապատասխանության, արդյունավետության և ազդեցության գնահատումն է՝ ուղղված Հայաստանում հակամարտության ազդեցությունների մեղմմանը և հակամարտությունից տուժած ամենախոցելի բնակչության հրատապ կարիքների բավարարմանը, ինչպես նաև՝ հրատապ և միջնաժամկետ ազդեցությունների բացահայտմանը**:**

Գնահատման ընթացքում բացահայտված լավ փորձառությունները և ստացված դասերը կներառվեն գործընկերների կողմից օգտագործվող մոտեցումների մեջ՝ նպաստելով ապագա ծրագրերի որակի, արդիականության և արդյունավետության բարելավմանը:

2.2 Գնահատման շրջանակը

Գնահատումն ընդգրկելու է ծրագրի ամբողջ տևողությունը՝ 2023 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի հունիս**:**

Հենվելով «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի գլոբալ մոնիտորինգային չափանիշների վրա**,** կոնսորցիումի ձևաչափով իրականացվող մարդասիրական ծրագրերը ենթակա են գնահատման՝ փորձառությունն ու լավագույն փորձերը հավաքագրելու և տարածելու նպատակով:

Գնահատողը կիրականացնի իր աշխատանքը Երևանում և ծրագրի թիրախային մարզերում, ընդգրկելով կոնսորցիումի բոլոր երեք գործընկեր կազմակերպությունների գործունեությունը:

2.3 Գնահատման արդյունքների շահառուները

Գնահատման արդյունքները կկիսվեն ֆինանսավորող կողմի՝ DG ECHO-ի, ինչպես նաև Հայաստանում գործող այլ ազգային և միջազգային մարդասիրական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ազգային և տեղական իշխանությունների հետ, ներառյալ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Առողջապահության նախարարությունը, ինչպես նաև մարզային և համայնքային իշխանությունները:

3. Մեթոդաբանություն

3.1 Գնահատման մոտեցում

Գնահատողը պատասխանատու է գնահատման մեթոդաբանության մշակման համար՝ հիմնված վերև նշված նպատակների վրա:

Այս գնահատումը կլինի արդյունավետության գնահատում, որը կենտրոնանալու է ծրագրի պլանավորված արդյունքների իրականացման վրա:

Հիմնական հարցերը, որոնք պետք է ուսումնասիրվեն, կլինեն՝

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (RELEVANCE)

Հիմնական հարց. Որքանո՞վ է գործողությունը նախագծվել և իրականացվել՝ արձագանքելու շահառուների հրատապ կարիքներին պատշաճ կերպով:

Ենթահարցեր.

- Որքանո՞վ էր ծրագրի նախագիծը նպատակահարմար՝ հաշվի առնելով դրա նպատակները և հակամարտությունից տուժած բնակչության կարիքները:
- Ինչպե՞ս է կոնսորցիումը ապահովել ծրագրի մեխանիզմների (օրինակ՝ գումարային աջակցություն, բնաիրային աջակցություն, ծառայություններ), թիրախավորման և ծառայությունների մատուցման մեթոդների շարունակական համապատասխանությունը:
- Ի՞նչ չափով է օգնությունը՝
  ա) բավարարել անմիջական մարդասիրական կարիքները, և
  բ) աջակցել երկարաժամկետ դիմակայունության զարգացմանը:
- Որքանո՞վ արդյունավետ է ծրագիրը հարմարվել փոփոխվող կարիքներին, առաջնահերթություններին և համատեքստային փոփոխություններին ժամանակի ընթացքում:

- Ի՞նչ արձագանքման մեխանիզմներ են ստեղծվել, և ինչպես են դրանք կիրառվել ծրագրի ձևավորման և իրականացման գործընթացում:
- Ինչպիսի՞ չափով են խոցելի խմբերի (կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, ներքին տեղահանված անձինք) հատուկ կարիքները հաշվի առնվել ծրագրի մշակման և իրականացման փուլերում:
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ ՀՀ կառավարության կողմից գումարային աջակցության սահմանափակումները կոնսորցիումի կարողության վրա՝ բավարարելու հակամարտությունից տուժած բնակչության կարիքները, ինչպես նաև այդ սահմանափակումների ազդեցությունը բնակչության կարիքների և հաղթահարման ռազմավարությունների վրա:
- Ինչպիսի՞ չափով է ծրագիրը համահունչ եղել ազգային քաղաքականություններին, արձագանքման ծրագրերին և սոցիալական պաշտպանությանը:
- Ի՞նչ հիմնական մարտահրավերների են բախվել կոնսորցիումի գործընկերները՝ այլ մարդասիրական դերակատարների հետ համակարգման և փոխլրացման ապահովման հարցում, և ինչպե՞ս են դրանք հաղթահարվել:

ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆ (COHERENCE)

Հիմնական հարց. Որքանո՞վ է գործողությունը համահունչ եղել և նպաստել կոնսորցիումի գործընկերների ներքին և արտաքին ՝ այլ մարդասիրական կազմակերպությունների ու պետական կառույցների միջամտություններին, ռազմավարություններին և քաղաքականություններին:

Ենթահարցեր.

- Որքանո՞վ է ծրագիրը ինտեգրված եղել կոնսորցիումի գործընկերների գործող ծրագրերին և ռազմավարություններին:
- Որքանո՞վ արդյունավետ է կոնսորցիումը համակարգել և համագործակցել դոնորի, այլ մարդասիրական դերակատարների (ներառյալ ՀԿ-ներ, ՄԱԿ-ի գործակալություններ) և պետական իշխանությունների հետ: Ի՞նչ համակարգման մեխանիզմներ են օգտագործվել:
- Ինչպիսի՞ չափով են գործընկերները համապատասխանեցրել իրենց գործիքները, մոտեցումները և գործընթացները՝ ապահովելու համահունչ և միասնական արձագանք:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ (EFFECTIVENESS)

Հիմնական հարց. Որքանո՞վ է ծրագիրը հասել իր նախատեսված արդյունքներին և նպատակներին:

Ենթահարցեր.

- Ինչպե՞ս են կոնսորցիումի գործընկերների միջև եղած տարբերությունները (մեխանիզմների, ծառայությունների մատուցման եղանակների և տարբեր

վայրերում թիրախավորման մոտեցումների մեջ) ազդել ծրագրի ընդհանուր արդյունքների և նպատակների իրականացման վրա:

- Որքանո՞վ արդյունավետ է գործել կոնսորցիումը՝ ամբողջությամբ և առանձին գործընկերները՝ իրականացմանը խոչընդոտող ներքին և արտաքին ռիսկերը հայտնաբերելու և կառավարելու գործում:
- Որքանո՞վ արդյունավետ են եղել կոնսորցիումի գործընկերների միջև գործող համակարգման և որոշումների կայացման կառուցվածքները, որոնք նպաստել են ժամանակին և որակյալ ծառայությունների մատուցմանը:
- Որո՞նք են եղել այն հիմնական գործոնները, որոնք նպաստել կամ խոչընդոտել են ծրագրի նախատեսված արդյունքների իրականացմանը:
- Որքանո՞վ ժամանակին և արձագանքող էր տրամադրված օգնությունը՝ փոփոխվող կարիքների համատեքստում:
- Ինչպե՞ս են շահառուները գնահատել օգնության որակը, նպատակահարմարությունը և օգտակարությունը:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (IMPACT)

Հիմնական հարց. Ի՞նչ ավելի լայն ազդեցություն (նկատառված կամ ոչ) է գործել ծրագիրը բնակչության, շրջակա միջավայրի, ինչպես նաև քաղաքականության և ոլորտային նպատակների վրա (ըստ ծրագրի ընդհանուր նպատակի ամփոփման):

Ենթահարցեր.

- Ինչպե՞ս է ծրագիրը նպաստել արձագանքման քաղաքական առաջնահերթություններին և ոլորտային նպատակներին:
- Գոյություն ունեի՞ն թե չկանխատեսված (դրական կամ բացասական) ազդեցություններ, և որքա՞ն արդյունավետ էին դրանք մոնիթորինգի ենթարկվում և հասցեագրվում:
- Ինչպիսի՞ չափով է ծրագիրը նպաստել թիրախային բնակչության դիմակայունության և դրական հաղթահարման կարողությունների ամրապնդմանը:
- Որո՞նք էին հիմնական դասերը, որոնք կարելի է կիրառել ապագա միջամտությունների մեջ՝ նմանատիպ համատեքստերում:

<u>3.2 Տվյալների հավաքագրում ֆ վերլուծություն</u>

Գնահատման ընթացքում տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը կիրականացվեն՝ միավորելով քանակական և որակական մեթոդներ, ապահովելու համար տվյալների համապարփակություն, հուսալիություն և վավերականություն:

Տվյալների աղբյուրները կարող են ներառել՝

- Փաստաթղթերի վերանայում (ծրագրային փաստաթղթեր, հաշվետվություններ, MEAL տվյալներ)

- Առցանց և անձամբ անցկացվող հարցումներ շահառուների և շահագրգիռ կողմերի հետ
- Ֆոկուս խմբային քննարկումներ (FGDs) շահառու խմբերի և տեղական համայնքների ներկայացուցիչների հետ
- Հարցազրույցներ՝ հիմնախնդրի վրա ազդող անձանց, գործընկերների, պետական մարմինների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

Տվյալները վերլուծվելու են՝ հիմնվելով գնահատման հիմնական թեմաների և հարցերի վրա (օր.՝ համապատասխանություն, արդյունավետություն, ազդեցություն և այլն), որպեսզի ապահովվի ծրագրի կատարողականի համապարփակ գնահատում:

4. Գնահատման գործընթաց ֆ արդյունքներ

<u>4.1 Գնահատման ժամանակացույց</u>

Գնահատումն կիրականացվի 2025 թվականի հուլիսին, ծրագրի ավարտից հետո: Վերջնական օրակարգը կհամաձայնեցվի գնահատողի հետ՝ նախնական զեկույցի (inception report) ներկայացումից և հաստատումից հետո:

Վերջնական գնահատման զեկույցը պետք է ներկայացվի սահմանված ժամանակացույցին համապատասխան (տես ստորև):

Գնահատումը հիմնվելու է ծրագրի ողջ ընթացքում կոնսորցիումի գործընկերների կողմից հավաքագրված մոնիթորինգային տվյալների վրա և համադրվելու է նոր՝ տեղում անցկացվող ուսումնասիրության ընթացքում հավաքագրվելիք տվյալների հետ:

4.2 Գնահատողի առաջադրանքները

Գնահատողը պատասխանատու է հետևյալ առաջադրանքների համար.

ա. Նախնական փուլ (Inception phase)

- Մշակել և ներկայացնել նախնական զեկույց (inception report)**,** որը կներառի մանրամասն մեթոդաբանություն, տվյալների հավաքագրման գործիքներ, գնահատման հարցերով աղյուսակ (evaluation matrix), աշխատանքային պլան և լոգիստիկ պահանջներ:
- Վերջնականացնել մեթոդաբանությունը՝ համագործակցությամբ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հետ:

բ. Տվյալների հավաքագրում

- Իրականացնել դաշտային աշխատանք կոնսորցիումի գործընկերների կողմից ընդգրկված վայրերում:

- Ներգրավել հիմնական շահագրգիռ կողմերին (տես հավելված Ա)՝ հարցազրույցների, ֆոկուս խմբային քննարկումների և համաձայնեցված այլ մեթոդների միջոցով:

գ. Տվյալների վերլուծություն

- Վերլուծել որակական և քանակական տվյալները, համեմատել արդյունքները և նպատակները ծրագրի ցուցանիշների, նախնական տվյալների և թիրախային արժեքների հետ:
- Տվյալները տարանջատել սեռի, տարիքային խմբերի, բազմազանության և այլ համապատասխան գործոնների հիման վրա՝ ներառականության և տարբեր խմբերի վրա ազդեցության վերլուծության համար:

դ. Զեկույցի նախագիծ

- Պատրաստել և ներկայացնել գնահատման զեկույցի նախագիծ, որը կներառի եզրահանգումներ, ուսանելի փորձառություններ և կիրառելի առաջարկություններ:
- Վերամշակել զեկույցը՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի և կոնսորցիումի գործընկերների կողմից տրամադրված հետադարձ կապի հիման վրա:
- Կազմակերպվելու են հանդիպումներ ծրագրի աշխատակազմի, շահառուների, տեղական իշխանությունների և գործընկեր կազմակերպությունների հետ՝ ծրագրի իրականացման և արդյունքների վերաբերյալ կարծիքներ ու հետադարձ կապ հավաքագրելու նպատակով:

ե. Վերջնական զեկույց եւ ներկայացում

- Ներկայացնել վերջնական, համապարփակ գնահատման զեկույց, որը կներառի՝
    - ազդեցության, արդյունավետության, համապատասխանության և համահունչության գնահատում,
    - թիրախային արդյունքների գերազանցման կամ չհասնելու պատճառների վերլուծություն,
    - ուսանելի դասեր և լավագույն փորձառություններ՝ ապագա ծրագրերի ձևավորման համար,
    - բոլոր համապատասխան հավելվածները, ներառյալ՝ հավաքագրված տվյալները, գործիքները և հղումները:
- Ներկայացնել հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ին և կոնսորցիումի գործընկերներին, ներառյալ՝ հնարավոր դասընթացների և փորձի փոխանակման աշխատաժողովի ձևաչափով:

4.3 Զեկույց եւ հաշվետվողականություն

Գնահատողը պետք է ամբողջ գործընթացի ընթացքում ապահովի թափանցիկություն, անկողմնակալություն և մեթոդաբանական խստություն:

Գնահատումը պետք է համապատասխանի էթիկական չափանիշներին՝ ապահովելով գաղտնիության պահպանում, տեղեկացված համաձայնություն և տվյալների պաշտպանություն:

Գնահատման արդյունքները պետք է ներկայացվեն փաստերի վրա հիմնված եղանակով՝ պարզ ու հստակ, և անդրադառնան այս տեղեկատվական փաստաթղթում նշված բոլոր գնահատման հարցերին:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ու հաստատումը պետք է ապահովվեն ողջ գնահատման ընթացքում՝ նախագծի զեկույցի վերաբերյալ հետադարձ կապի փուլերի միջոցով:

4.4 Որակի ապահովում

Գնահատողը պետք է ապահովի, որ գնահատումը համապատասխանի ընդունված որակի չափանիշներին, այդ թվում՝

- Տվյալների վավերականություն և հուսալիություն,
- Հստակ մեթոդաբանություն և վերլուծություն,
- Դաշտային աշխատանքների էթիկական իրականացում,
- Տարբեր շահագրգիռ կողմերի, հատկապես խոցելի խմբերի, ձայների ներառում:

4.5 Արդյունքների լուսաբանում

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն և կոնսորցիում գործընկերները կտրամադրեն վերջնական գնահատման զեկույցը հիմնական շահագրգիռ կողմերին, ներառյալ՝ դոնորներին (հատկապես՝ DG ECHO-ին), այլ մարդասիրական կազմակերպություններին, պետական կառույցներին և տուժած համայնքներին:

Սա կծառայի՝

- թափանցիկության ապահովմանը,
- պատասխանատվության խթանմանը,
- ինչպես նաև՝ ապագա մարդասիրական միջամտությունների նախագծման և իրականացման համար որպես արժեքավոր տեղեկատվություն:

4.5 Հանձնառության արդյունքներ եւ առաջարկվող ժամանակացույց

Գնահատողը պետք է ներկայացնի հետևյալ հիմնական արդյունքները՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան.

Արդյունք	Նկարագրություն	Ժամանակցույց	Հանձնում
Նախնական զեկույց	4.2 բաժնում նշված տեղեկատվություն	2 աշխ. օր հանձնառությունը ստորագրելուց հետո (հուլիսի սկիզբ)	Էլ. հանձնում ՄԿՄ կոնտակտային անձին
Տվյալների հավաքագրման փուլ	Համաձայնեցված վերջնական եզրակացությունների համադրված ամփոփում	Նախնական զեկույցի հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (ակնկալվում է՝ 2025 թվականի հուլիսի կեսերին)	Անձամբ ներկայացում
Զեկույցի նախագիծ	Ըստ Հավելված Բ-ի ճշգրտումների	Նախնական բացահայտումները ներկայացնելուց հետո 5 աշխ օրվա ընթացքում (ակնկալվում է 2025թ. հուլիսի վերջին)	Զեկույցի նախագծի էլ. հանձնում ՄԿՄ կոնտակտային անձին և աշխատաժողով գործընկերների համար
Վերջնական զեկույց	Ըստ Հավելված Բ-ի ճշգրտումների	ՄԿՄ և գոհաբնակերների կողմից նկատառումները ստանալուց հետո 5 աշխ օրվա ընթացքում (2025թ. օգոստոսի սկիզբ)	Էլ. հանձնում ՄԿՄ կոնտակտային անձին

Վճարման ժամանակացույց եւ պայմաններ

Գնահատման համար հասանելի է առավելագույնը **1 միլիոն ՀՀ դրամ**:

Բոլոր լոգիստիկ, կացության, ճանապարհորդության, թարգմանության կամ այլ օպերացիոն կարիքները պետք է կազմակերպվեն և ֆինանսավորվեն գնահատողի կողմից կամ գնահատողի ռեսուրսների միջոցով՝ տվյալ առավելագույն բյուջեի սահմաններում:

Վճարման ժամանակացույցը հետևյալն է.

- 20%՝ պայմանագրի ստորագրումից հետո
- 80%՝ վերջնական զեկույցի ներկայացումից հետո

4.6 Կառավարման կարգավորումներ

Գնահատողը հաշվետու է լինելու և կկապվի ՄԿՄ-ի կոնտակտային անձի հետ՝ այս առաջադրանքի բոլոր հարցերի և որոշումների շուրջ:

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն պատասխանատու է լինելու տրամադրելու շահագրգիռ կողմերի և շահառուների հնարավոր ցուցակներ:

Գնահատողը պատասխանատու է իր սեփական լոգիստիկ կազմակերպման և թարգմանության ապահովման համար՝ անհրաժեշտության դեպքում:

5. Դիմելու գործընթացը

5.1 Դիմելու պահանջները

Հետաքրքրված թեկնածուներն և իրավաբանական անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Թեկնածուի(ների) մանրամասն ինքնակենսագրություն (CV):
- Ֆինանսական առաջարկ: Աշխատանքների ծավալի գնահատված տևողությունը և պահանջվող գումարը, ներառյալ օրական վարձատրությունը և համապատասխան լոգիստիկ ու ադմինիստրատիվ ծախսերը:
- Փաստաթղթեր, որ ապացուցում են փորձը: Հոդվածների, բլոգերի կամ այլ հրապարակված նյութերի հղումներ, որոնք առնչվում են համապատասխան թեմաներին:
- Հասանելիություն: Գնահատողի հասանելիության հաստատում՝ հստակ ամսաթվերով՝ 2025 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին:

Եթե դիմումը ներկայացվում է որպես իրավաբանական անձ, ապա պետք է ներկայացվեն նաև կազմակերպության կամ ընկերության պրոֆիլը, ինչպես նաև առաջարկվող փորձագետ(ների) պրոֆիլները՝ իրենց ինքնակենսագրություններով (CV), հասանելիությամբ, փորձը ապացուցող փաստաթղթերով և նմանատիպ աշխատանքների հաջողված փորձի կոնտակտային տվյալներով:

5.2 Պահանջվող որակավորումներ

Պարտադիր՝

- Մինիմում 5 տարվա մասնագիտական փորձ մարդասիրական միջավայրում աշխատելու և մարդասիրական նախագծերի գնահատումներ իրականացնելու ոլորտում:
- Փաստացի փորձ և գիտելիք քանակական և որակական հետազոտություններ իրականացնելու ոլորտում:
- Գերազանց վերլուծական հմտություններ:
- Փաստաթղթերի գրառման և առաջարկությունների ձևակերպման զգալի գործնական փորձ:
- Անգլերեն գրավոր և բանավոր խոսքի գերազանց իմացություն :

Նախընտրելի՝

- ECHO ֆինանսավորմամբ նախագծերի գնահատման փորձ:

- Նախկին փորձ վերահսկողության և գնահատման մեթոդաբանությունների կիրառման ոլորտում:
- Ռուսերեն լեզվի իմացությունը կդիտվի որպես առավելություն:

5.3 Ինչպես դիմել

Դիմումի փաթեթները պետք է ներկայացվեն էլեկտրոնային տարբերակով՝ procurement.armenia@peopleinneed.net հասցեով՝ թեմա դաշտում նշելով՝ «Հումանիտար աջակցություն՝ հակամարտությունից տուժած խոցելի անձանց համար»:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 2025 թվականի հունիսի 25-ը, ժամը 18:00:

Հավելված Ա: Առաջարկվող շահագրգիռ կողմերի ցանկ

Շահագրգիռ կողմեր/Շահառուներ	
Հիմնական իրականացնող	«Մարդը կարիքի մեջ» ՀԿ
Իրականացնող գործընկեր(ներ)	Աշխարհի բժիշկները, Առաքելություն Հայաստան
Կառավարության ներկայացուցիչներ և ՏԻՄ-եր	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն
	Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ
	Երևան և հարակից մարզեր
Շահառուները	● Կոնֆլիկտից տուժած հյուրընկալող համայնքների ներկայացուցիչներ ● Արցախից տեղահանվածներ, ովքեր նարկայումս տեղակայված են ծրագրի թիրախ մարզերում
Այլ շահագրգիռ կողմեր	Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա

Հավելված Բ. **Վերջնական գնահատման զեկույցի պահանջներ**

Վերջնական գնահատման զեկույցը, որը պետք է գրվի անգլերեն լեզվով, պետք է համապատասխանի հետևյալ ստանդարտներին և պահանջներին՝

1. Բարեվարքական ամփոփագիր (առավելագույնը 2 էջ)
2. Ներածություն (առավելագույնը 1 էջ)
3. Մեթոդաբանություն (առավելագույնը 2 էջ)
4. Հետազոտություններ և քննարկումներ (առավելագույնը 10 էջ)

5. Ուսուցողական դասեր և համապատասխան առաջարկություններ (առավելագույնը 6 էջ)

Հավելվածներ

Զեկույցը պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կոնտակտային անձին:

Ներկայացված հավելվածները պետք է առնվազն ընդգրկեն՝

- Հարցումների գործիքները,
- Հարցազրույց անցկացրած պատասխանողների ցուցակը (ներառյալ անունները, պաշտոնները, կոնտակտային տվյալները, աշխարհագրական գտնվելու վայրը):